ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<< 22 >> <<նոյեմբեր>> 2018թ N 128

ք. Եղեգնաձոր

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
"ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ" ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԱՆԱՀԻՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ, ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԿԱՐԵՆ ԱՍԱՏՐՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ- ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Բաժնետիրական ընկերությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 12-րդ մասի 12-րդ կետով և հիմք ընդունելով <<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն Անահիտ Կարապետյանի կողմից 2018 թվականի նոյեմբերի 12-ին ներկայացված դիմումն (մտից համար՝ 6544)՝ ի լրումն 2018թ. նոյեմբերի 20-ին ներկայացված դիմումը (մտից համար՝ 6648)՝.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝

1. 2018 թվականի նոյեմբերի 26-ին լուծել <<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրեն Անահիտ Կարապետյանի հետ 2015թվականի դեկտեմբերի 28-ին կնքված թիվ 287 աշխատանքային պայմանագիրը:

2. Տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել <<Եղեգնաձորի բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ի տնօրենի բուժական գծով տեղակալ Կարեն Ասատրյանի վրա:

3. Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝ օրենքով սահմանված կարգով կազմակերպել հանձնման-ընդունման աշխատանքները:

Տ.ՍԱՐԳՍՅԱՆ